


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ֆր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Հարկի մեկ ծրարով
Տարեկան . . 14 ֆր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄՆԵ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՍԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иправункъ“

ВАРНА

Գրոշրիւք եւս
չեմ տրոշիր

ՁԱՅՆ ԲԱԶՄԱՑ
ՁԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Արդարութիւնը յաղթական
կողմանիս բռնաբար լուրերուն՝
վերջերս կը յաջորդէ ուրախա-
ռիթ սուրհանդակն. ըստ որում
կը տեղականանք, թէ Չարին
կառավարութիւնը՝ նորագոյն
կարգադրութեան մը համաձայն,
Հայ Եկեղ. կալուածոց և ընչից
գրաւման գործողութիւնը ան-
պայման կերպով յետագած է
մինչ ցնար անօրինութիւն: (*)

Հայութեան գլխին կուտակ-
ւալ, ազգ. գոյութեան սպառնա-
ցող սեւ սեւ ամպերն՝ առ այժմ
գէթ ըստ տեսականին անվտանգ
փարատելու բնոյթ մը ցոյց կու-
տան: Երկինք իսկ խեւս բազ-
մաչարչար Հայ ազգի բազմապի-
սի ցաւերուն գլխաց. սակայն
գոհնայ բռնաւորին իր դաժան
ձեւերն անգամ մը եւս հայու
արեամբ ներկելէ վերջը միայն
զղատացաւ: Ո՛հ, ի՞նչ հեգնու-
թիւն քրիստոնեայ անուան: Մէկ
ձեւերն մէջ բռնած թաչ ու Աւե-
տարան, իսկ միւսովն կռթնած
իւր սուրին՝ արցունք ու աւեր
կը սփռէ չորսդին:

Ի՞նչով էին յանցաւոր անոնք,
որոնց գնդակածակ մարմիննե-
րէն բաժանուած հոգիներն,
կարծես հրեշտակային թեւեր
զգեցած դէպի վեր կը սլանային
և ամպերէն ալ անդին երկնա-
կամարը ճեղքելով Յաւիտեանակա-
նին գահոյից առջեւ՝ աղբրաբ-
կու՝ Բռնակալին նախճիրներն ող-
բալով, ազգային բողբոջ թղթա-
ծրարն նոյն իսկ Աստուածային
ձեռաց յանձնեցին: Միթէ՞ մե-
ղաւորներ էին անոնք, որոնց
սուրհանդակ մարմիններէն գորս
ցայտող արեան կայլակներն բո-
լորչեացած՝ հրեղէն լեզուի մը
նման գուլայ գուլայ վեր բարձ-

րանալով, երկնից կապոյտը բո-
սորեցին, և արքայական պա-
լատներու կասկածելի հանդիսը
վրդովելով՝ իրենց մահաւաճը
անմահացան:

Ալեկոծեալ հայութիւնը, կա-
թողիկոսէն սկսեալ մինչ յետին
մշակն, ամենքն ալ միաբերան,
բողբոյս ձայնէր բարձրացուցած՝
ազգային դարեւոր իրաւանց
պաշտպան կանգնեցան, և մահ
ու աքսոր առ ոչինչ համարելով
գոյութեան անհաւասար կռիւն
հռչակուեցաւ: Մէկ կողմանէ Հա-
յոց Հայրիկն՝ Լուսաւորչայ գա-
հուն այդ արժանի հովաւապետը,
իրեն նեցուկ ունենալով ազգ-
անդամ բարեկի իրաւունքը և
ապաւինած միմիայն Աստուածա-
յին շնորհաց. իսկ միւս կողմանէ
հանգստատու բռնութիւնը, իր
յոյսը կեդրոնացուցած բիրտ ու-
ժին և կռթնած իր բանակին,
յաղթանակը ապահովուած կը նը-
կատէր: Մին իր կայսերական
աղաւանդակաւու գահին բար-
ձունքէն գոռ ձայնով և հրամա-
յական շեշտով մը պատգամներ կո-
րտայ, իսկ երկրորդը իր հայ-
րապետական անշուք գոհէն գող-
գոչուն և կերկարակաւ գիծու-
թիւն կը հայցէ. մին հզօր իւր
բիրտ ուժով՝ իսկ միւսը անըն-
կուս իր իրաւունքովը: Ութսու-
նամեայ ալեւոր Հայրապետը,
հակառակ իր յառաջացած տա-
րիքին՝ երիտասարդական կամք
ու կարողով թարմացած այրեա-
ցաւեր սրտի մորմոքէն կարի
վշտահար, ի վարմանս բազմաց,
կայսերական շքանշաններն ար-
համարհելու չափ անհաւատալի
քաջութիւնը ցոյց տուաւ, բայց
անկարելի ընդունութիւնը իր ա-
նիբաւ պահանջին մէջ միշտ յա-
մառ, գրաւման գործը անարդել
յառաջ մղելու խտտագոյն հրա-
մաններ կարճակէր, թէեւ ամե-
նաւերջ Հայութեան ընդդիմու-
թեան բախելով, արիւնալի նո-
րանոր տեսարաններու ոճրագործ
պատասխանատուութեամբ կը
ծանրաբեռնուէր:

Պատմական և որ աւելին է,
Հայոց համար օրհասական արդի-
փափուկ բողբոջներն, չուշացաւ

և ուստի Հնաժողովներու
իւր գործնական մասնակցու-
թեամբը Մենտորեան բարեբարի
գերն ստանձնել. էջմիածին՝
անձկութեան առաջին շրջաննե-
րին, երբ խորախորհուրդ տխու-
թեամբ համակուած ու շուարուն
իր սրգեկանց տրամագրութիւն-
ներն կը փորձէր, և ահա հայ-
րենեաց հարազատ զաւակները,
գիտական լոյսով ծանրաբեռն-
եալ գլուխներ՝ անձնական ամեն
գործ պահ մը առաթուր ըրած,
էջմիածին փութացին ձեւելու և
յատակադժեւու ուղղութիւնը այն
ընթացքին ուրիշ պիտի քայլէր
Հայոց Հայրապետը. և ատոնք
իրեն հայ-զաւակ իւրեանց ազգ-
պարտականութիւնը անթերի
կատարողի մը գոհունակութեամբ
ընդհատ, համախմբուած մա-
ճին չուրջը, օրհասական հիւան-
դին յոյժ թանկագին կեանքը
փրկելու գեր-գոյն ճիգեր թա-
փելով, զայն հոգեւոր ճիւղա-
ներէն մաղաղութ խելու հազ-
ուադիւտ առնականութեամբ մը
փայլեցան: Այո, թէեւ միթազնե-
ցան հոգիներ, սակայն անոնց
խաւարէն կենարար լոյսը սրի-
ւեցաւ, և կորստեան ակներեւ
վտանգին մատնուած հայը, այ-
սօր կենդանութեան նշաններով
կը պանծայ:

Ահա, Միութեան գործած նո-
րագոյն հրաշքներէն ամենէն
աչքառուն. և ո՞վ կրնայ զայն
ուրանալ: Եւ մաղթենք սր Հայը
քաջալերեալ սոյն յաղթական
քայլէն, գիտնայ ազգ. ամեն
կենսական հարցերու մէջ՝ միմ-
եանց սերտիւ շղթայուած ազգ-
Սուրբ գաղտին իրագործման նե-
ցուկ ու սատար հանդիսանալ սա-
արդար և բանաւոր համադրման
թէ միութիւնը զօրութիւն է,
ոյժ մը՝ անընկճելի և միշտ բա-
րեբար:

Սոյն տողերը փակիլէ առաջ,
իրեն մարդ, և մանաւանդ իր-
եւ հայ՝ երախտագիտական
պարտք մը կը ծանրանայ մեր
վրայ: պարտք մը անխուսափելի
և գիւրտտ հանդէպ ազգ. ընդ-
հանուր և նորագոյն մարտիրո-
սաց: Փոխան մարմարեայ ցուրտ

և անխոս շիրիմներու, թո՛ղ անձ-
նիւր հայ անհատ ո՛ւր որ ալ
լինի նա, շարժական կոթող մը,
խորան մը կանգնէ յինքեան
սրբավայր մը պաշտաման նու-
իրեալ մեր նահատակաց անուան,
ու մեր սրտերուն ամենամարդուր
և անմեղքեան ծալքերուն մէջ
անշնչելի կերպով քանդակուած
թո՛ղ մնայ յիշատակն ամեն ա-
նոնց որոնք վեհ իտեալի մը իրա-
կանացման համար ինկան քա-
ջար:

ՎԱՌՆԱ

ԱՆԱԿՍԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒ-
ԹԻՒՆ ՄԸ

Ամսոյ 18 ի երեկոյին կոչնադիր մը
ստացանք. որով հրաւէր կը կարգա-
ցուէր յաջորդ առաւօտ ժամը իննին
նեկոյ զանուիլ նահանգային հարցա-
քննիչ դատաւան:

Պատուելի Գէորգեան. Պ. Յ. Ֆ.
Ես (ու քանի մը անձեր որոնք չը
ճանչցուեցան այստեղ) որոշեալ ժա-
մուն Դատարանի սրահ կը սպասենք:
Կէս օրէ առաջ պատուելի Գէորգեան
եւ Ֆ. Հ. միայն կը հարցաքննուին,
ու կէս օրէ վերջ. Պ. Յ. եւ Ես. ու
անեկց մինչեւ երեկոյեան ժամը չորս
ու կէս:

Անուն. մականուն, ծննդավայր
տարիք, արհեստ կամ զբաղում եւ այ-
լն սորձանագրելէ վերջ, կսկսի հար-
ցաքննութեան:

Հ «Տիգրիս» եւ «Չայն Հայրենեաց»
թերթերու նախկին խմբագիր, Պ. Կա-
րեկին Ձիթեան անուն անձը՝ կը ճանչ-
նաք եւ ինչպէս:

Պ. Վերոյիցեալ թերթերը կարգաւորու
համար գրեթէ այդ անունը. բայց ան-
ձամբ ճանչցայ զայն երբ Պուլկարիոյ
Ռուսչուգ քաղաքը եկաւ:

Հ. Երբ եկաւ Ռուսչուգ եւ ի՞նչ պա-
րագոյններու տակ ճանցաք զայն:

Պ. Չատկէն գրեթէ տասնեկինգ օր
առաջ եկաւ Ռուսչուգ. եւ որովհետեւ
թերթերու մէջ իր անունը դրուած էր
ու միեւնոյն ատեն հռչակաւոր բեմա-
սաց մը նկարագրուած, հետաքրքրուե-
ցայ ճանչնալ զինքը:

Հ. Ինչ խօսեցաք հետը:

Պ. Բնականաբար Սզգին վէրքին վ-
րայ:

Հ. Ինչ պատասխանեց:

Պ. Պատասխանեց թէ՛ յուսահատե-
լու չէ, եւ անսայթաք շարունակելու
է այն ուղին որ ամենապարտաւորաբար
դէպի նպատակը պիտի տան:

(*) Այս ուրախութիւնը լուրին հաս-
տատութիւնը զեւ պաշտօնական տե-
ղեկութիւններու կը կարօտի:

գարուած էր, սպասներուն, ուստի-
լիքներուն մեծ խնամք տարուած էր,
Բերքի քանակներ 200 ի մօտ ընտիր պատ
կերներ վ ներկայից տրամադրութեանը
տակ դրուած էին ձերարար :

Սոյն հանգէսը, պարահանդիսէ ա-
ւելի ընտանեկան երեկոյթի մը կեր-
պարանդ առած էր : հոն սրահին մէջ
մասնը երկուստարգներ պարերով ժամա-
նակ կանցնէին անպիկ կարգ մը հանգի-
սականներ ազգ : Ե գեր կերպէին եւ
հայկական պարեր կը ձեռնարէին :
Սորիսի միջոցին Կուսակցութեան
ընդհանուր Բաժնի ուղեւոր, Կուսե-
ցի Գրիգոր Եւ ուրիշ ազգ : մի քանի
երգերը մեծ ընդունելութիւն գտան :

Կոնֆէրիս, Սերապիս, Պոլսը-
նէի մեծ ուղեւորութիւն յառաջ երկին,
Թէեւ բազմութիւնը ցանցառ էր,
թերեւս անձրեւին պատճառաւ, բայց
ներկաները գոհ մնացին, հոն ամեն
զատակարգէ անձեր կրցան լաւ ժա-
մանց մը վայելել :

Ինչպէս կը լսենք հազար լէվէն
աւելի հասոյթ մը գոյացած է թէեւ,
բայց կարգ, մասնախմբի ըրած ջան-
քերը չենք կրնալ ըսել թէ փոխարի-
նուած են :

ՊԱՐՈՂ ՄԸ

ՀԱՅԵԱՑԲ ՄԸ

— Ե —

(Թ Ա Տ Ր Ո Ն)

Վերջերս Պուլկարիոյ հայ գը-
րական հրապարակի վրայ մեծ
եռուզեւ մը և այլազան գաղա-
փարներու տարափի աղմկոտ ի-
րարանցում մը կը նշմարուի
գէպի թատրոնը : Այս կը նշա-
նակէ թէ Պուլկարահայ հասա-
րակութիւնը արթնցած ու սթա-
փած է իւր նախապաշարմանց և
թանձրամտութեան խոր թմրու-
թենէն, և մտքի լուսաւորու-
թիւնը զգայմանց աշխուսումը,
և բարեբու վստահութիւնն ու բար-
քաւաճումը արեւմտաւորէն գէպի

արեւելք չուերով սկսած է տա-
կաւ առ տակաւ ներդարծել նաեւ
հայ տարրին վրայ ալ : և վեր-
ջապէս մէկ բառով պուլկարահայ
հասարակութիւնը սկսած է յա-
ռաջգիւղութեան շաւղին մէջ մըտ-
նել : Դանի որ յառաջգիւղութեան
թեան ստատրին մէջ թատրոնն
ալ իւր կողմէ իւր հրահանգիչ
ու մարդիչ յատկութիւններովը
կարեւոր ու անուշադիւրի գերը
կատարած է :

Թատրոնը լայց ոչ իպիշական
կամ օրթոյնիական, այլ լուրջ
ու բարոյալից խաղերու թատրոն
է որ այսօր դարերու շրջանին
մէջ մեր գաղափարներու վրայ
ծանրացող թանձր ու մութ մը-
շուէն ու մռայլ փայտաթելով
բարձր է անոնց դձուռ ու դու-
հիկ յատկութիւնները, ու զա-
նոնք մաքրելով ու զտելով իւր
անտեղի ու անհամ մասերէն ա-
ւելի ճոխացուցած և աշխուսում-
ցած է :

Թատրոնն է որ մարդկային
արդի էն փափուկ ու էն զգայուն
թելերը պրկելով արթնցուցած
ու ներդաշնակած է մեր զգաց-
մանց այն նուրբ ու վսեմ մա-
սերը որոնք մեր փոտած ու նե-
խած գաղափարներու ազդեցու-
թեան տակ տակաւ առ տակաւ
սկսած են մարիլ յուրի ու շար
զգացմանց ու կիրքերու մէջ : և
նոյն իսկ գոյութիւն ունենալէ
դադրիլ ու անհետանալ :

Թատրոնն է նաեւ որ գաղա-
փարներու ճոխացումը մտաւո-
րականին կցած է նաեւ հոգե-
կան աշխուսութիւն :

Վերջապէս թատրոնը իւր վը-
սեմն ու բարին սովորեցնելու
յատկութեամբ զբօսավայր կամ
ժամանցավայր մը ըլլալէ աւելի

մարդու մտաւորական ու հոգե-
կան մարշարան մը ըլլալը աւե-
լի հաւանելի ու անուշադիւրի է :
Ուստի մեծ հաճոյք կը պատ-
ճառէ մեզ այդ խորտաքննիչ
գոյութիւնն իւր անխուսափելի
փաստ հայ ամբոխին թատրոնի
էութիւնը ուսումնասիրած ու ա-
նոր համակրած ըլլալուն :

Յարաւեւութիւնը բաղձալի է :

ԴԻՏԱԿ

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ՊՈԼՏՅՈՒ ՊՈԼ-
կար գործակալատարին հաղորդուե-
ցաւ որ Պուլկարիոյ առաջնորդ-
դական ընտրութիւնը կատար-
ուելով Տ. Ներսէս եպս. ընտրուած
է այդ պաշտօնին, և այս առթիւ
տեղեկութիւն տրուեցաւ նորըն-
աիր առաջնորդին վարած պաշ-
տօններուն նկատմամբ, խնդրու-
ելով որ անոր պաշտօնին համար
կարելի եղած դիւրութիւնը տըր-
ուի : Գործակալատարը այս զեկու-
ցումը պիտի հաղորդէ Սօֆիա, և
ապա Պատրիարքարանի պատաս-
խանելէ յետոյ նորընտիր առաջ-
նորդը պիտի այցելէ թէ՛ գոր-
ծակալատարին և թէ՛ Պուլկարաց
էքզարքին, որուն հետ ծանո-
թութիւն ունի արդէն իր փո-
խանարդութեան օրէն :

ՍՕՖԻԱՅԻՆ Տ. Վահան Վ. Յա-
կոբեան գիր մը ուղղեալ Պուլ-
կարիոյ նորընտիր առաջնորդ Տ.
Ներսէս եպիսկոպ. կը յայտնէ թէ
Պատրիարքարանէ իր ստացած
նամակէն տեղականաւորը որ վար-
չութիւնը վաւերացուցած է իր
պաշտօնը, կը շնորհաւորէ զին-
քը, յայտնելով որ իր նոր պաշ-

տօնատեղին ուղեւորելու մասին
կուզէ տեղեկանալ իր ըրած կար-
գադրութեան : Տ. Ներսէս եպիս-
կոպի հաղորդէ մեկնելու մասին
ըրած կարգադրութիւնը : Միւս
կողմէ Վառնայէ մեզ կը գրեն
թէ տեղական Մարմինները և
ժողովուրդը կը փափաքին որ նոր
ընտիր առաջնորդը անցնի իրենց
քաղաքէն : Նոյն նամակին մէջ
բացէ ի բաց կը հերքեն պաշտօ-
նակցի մը Սօֆիայէ գրուած նա-
մակին այն մասը թէ Պուլկարիոյ
առաջնորդարանին համար այլ և
այլ քաղաքներէ որոշուած և սահ-
մանուած գումարները երեւա-
կայական են, « Բացարձակ սուտ
մըն է այս կըսեն, որովհետեւ
ժողովուրդը պատրաստ է ոչ թէ
միայն սահմանեալ գումարները
տալու, այլ ի հարկին աւելին
ալ » : Նոյն նամակին մէջ գարձ-
եալ ցաւ կը յայտնուի որ առաջ-
նորդին ընդունելութեան կար-
գադրութիւններով զբաղելու հա-
մար, Սօֆիայի մէջ կազմուած
յանձնաժողովը ցարգ պաշտօնի
դըւն չէ հրաւիրուած, և յանուն
առաջնորդարանի ստացած 5-600
ֆր. գումարն ալ չէ յատկաց-
ուած որ առաջնորդը իր պաշտօ-
նատեղին կարենայ ուղեւորել :
Նամակագիրը կարգ մը դիտու-
ղութիւններ ալ կրնէ Տ. Վահան
Վ. ի Ռուսիանոյ հովուութեան
նկատմամբ, սակայն չենք ուզեր
հրատարակել :

Այս նամակը ստանալէ յետոյ
լսեցինք Տ. Վահան Վ. առաջ-
նորդին ուղղած նամակով կուզէ
տեղականաւոր իր ուղեւորութեան
նկատմամբ ըրած կարգադրու-
թեան, հետեւաբար այդ մասին
հաշիկ եղածն ալ պիտի գործադ-
րէ հարկաւ, ինչպէս կը պահան-

ԱՐՄԵՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՁԻՒԼ ՅԻ...

Դ.

« — Ինչո՞ւ չէք խօսիլ, յարեց Վէլի Աղա, ու-
րուն հետաքրքրութիւնը կաւենար խոսի իմ սըր-
տածմիկ վիճակիս : Պատմեցէ՛ք... յայտնեցէ՛ք
ինձի ձեր վիշաք, և քանի որ գաղափիք մը կը
ճնշէ ձեր վրայ, Եթէ կրնամ վիշտերուդ սփոփանք
մը տալ, գիտցէ՛ք որ չեմ խնայել :

Խղճման թուրքին այս անկեղծ յայտնութիւնը
հոգիս փղձկեցուց, հետեւաբար չը կրնարով ինք-
զինքս զսպել սկսայ հեծկտալ :

Վէլի Աղա, որ վաթսուներ մօտ տարիք մը ևւ
պատկանելի կերպարանք մը ունէր, ձեռքը գող-
ղալով իր ձիւնափառ ու վայելչագեղ մօրուքին
տարաւ ու կրկին հարցուց :

« — Ինչ կայ... Ինչո՞ւ չեն կրնար խօսիլ, Չէ՞
որ խոստացայ քեզի ձեռքէս հեծած չը խնայիլ :

« — Ո՛հ, ներեցէ՛ք, Վէլի Աղա՛, բացազանչեցի
հոգեւոյս դանտութիւնը զսպելով : Տառապա՛մ եմ,
չառ տառապա՛մ եմ ըսմանդակ կրնաքիս մէջ : Ու
երբ այս սեմնէն ներս մտայ, չը կրցայ հանգու-
թել. սիրտս լեցուած էր : Մտիկ լրէ՛ք. թափա-
ռակա՛ն, խեղճ ու յուսահատ հայ մէն եմ...
կոտորածի ժամանակ զո՛հ տուի կինս ու երեք տա-
րու անմիջ մասուկս : Ունէի չափահաս աղջիկ մը,

որ գաղանաբարոյ քուրտի մը ձեռքն ինկած էր :
Բայց Աստուծոյ գթութեամբ բարի հաղարարեալ մը
կը անանէ զանի ու քովը կանէ : Այդ հաղարարեալը
Ձիւ մեծութեան ծանօթ է : Բէշատ պէյ կը կոչուի... »

« — Հասկցա՞յ... հասկցա՞յ, ընդհանուր Վէլի
Աղա գթոտ ու խանդաղատալի հոգածութեամբ մը :
Մինակ թէ ո՞ր տեսար Բէշատ պէյ կոչուած հա-
ղարարեալը :

« — Պուլկարիոյ :
« — Մօտ օրի՞րս :

« — Այո՛, չորս ամիս առաջ :
« — Սեկից գալի՞ք ետքը՝ Ինչո՞ւ համար ուղղակի
քովս չեկար :

« — Ա՛խ, տէ՛ր իմ, ինչպէ՞ս ըսեմ : Շողեմաւէն
իյնելուս պէս Ոստիկանատունը առաջնորդուեցայ,
կանոնաւոր անցադիր ունէի : ասիկա մէկդի նետե-
ցին ու գաւառարկեցին զիս : Ո՛հ հարցաքննութիւն
եւ հետեւաբար՝ ո՛չ ալ արդարութիւն տեղի ունե-
ցաւ, վերջապէս բարի դատաւորի մը շնորհիւ ան-
պարտ արձակուեցայ, երբ քննութեան եկած էր
ան :

« — Եթէ աղջիկդ տեսնելու ըլլատ, կը ճանչնա՞ս :
« — Ե՛ս :

« — Այո՛, դուն :
« — Ո՛հ, Վէլի Աղա՛, եթէ աչքերս խաբեն զիս,
գիտցէ՛ք որ սիրտս պիտի դարձնէ ու արիւնս պիտի
քաշէ :

« Ան ասեմ Վէլի Աղա տեղէն վեր ելաւ ու սրա-
հին վրայ բացուած դուռնէ մը ձայնեց :
« — Ձիւնփի՛, Ձիւնփի՛... »
« Ու կանացի ձայն մը, որուն մէջ թրթռում,

զողղացող ու միանգամայն յանկուցիչ շեշտ մը
կար՝ որ չէր նմաներ թրթռահներու մեղմադձոտ
չեղտին ու սրտասանութեան, ներքէն պատասխա-
նեց :

« — Ինչ կայ, Վէլի Աղա՛ :
« — Հո՞գ ես, կը հարցունեմ, յարեց Վէլի Աղա :

« — Այո՛, հոս եմ, մրմնջեց ձայնը :
Բարեմիտ թուրքը գանալով ինձի, ըսաւ :

« — Դուն սա՛ պահարանին մէջ մտիւր Մտիկ ըրէ՛
մեր խօսակցութիւնը :

Պահարանն, որուն մէջ պիտի մտնէի, լայն ու
բաւական մեծակալ էր և յատկացուած էր անկո-
ղիններու : Կամայ մը գուռը բացի ու կծկուեցայ
անոր մէկ անկիւնը : Վէլի Աղա ներս կանչեց Ձիւն-
փին ու ահա՛ ինչ որ խօսեցան :

« — Ձիւնփի՛, սիրելի աղջիկս, ըսաւ Վէլի Աղա,
ամեն ասեմ հայրենիքիդ ու անոր միացող աւերակ-
ներու վրայ կարտասուես... Ինչո՞ւ օր մը ծնողդ
ալ չես յիշեր :

« — Ծնողքս... հոգեւոր Ձիւնփի. ինչպէ՞ս չեմ
յիշեր. միթէ՞ աչքէս կը հեռանայ անոնց աղետալի
ճակատագիրը... բայց ինչ կուգայ ձեռքէս :

« — Եթէ հայրդ կամ մայրդ ողջ ըլլային, որչա՞փ
ուրախութիւն պիտի զգայիր, անանկ չէ՞ :

« — Ո՛հ, այո՛, ամեն տառապանքս պիտի մոռնայիս :
« — Չե՛ս հաւատար որ անոնցմէ մէկը կենդանի
ըլլայ :

[Շարունակելի]

չէ իր պաշտօնին պարտականութիւնը : (Սուրհանդակ)

— Բաղէշի Կորուս գիւղին մէջ տարօրինակ ամուսնութիւն մը կատարուեալ է, տեղւոյն քահանան 18 տարեկան օրիորդ մը պսակել է երկու տարեկան մանչու մը հետ : Այս ծիծաղելի ամուսնութեան շարժառիթն է եղեր աղջկան հօր հարստութիւնը գուրսի ժառանգորդներու չտալ :

Պսակող քահանան պատժուել է , եւ կը կարծուի թէ քահանայութեան խաղաղ պիտի չընկուի :

Երկրորդ թիւն Կատարանի անդամ Կարապետ պէյ Ռէիզեան յանկարծամահ եղած է նոյեմ. 7 ին : Կատարանը ի յարգանս հանգուցելոյն յիշատակին իր նիստը դադարեցուցած է, եւ հետեւեալ օրը հայ եւ օտարազգի բարձր դասու ներկայութեան յուղարկաւորութիւնը կատարուած է . դամբանական խօսած են Տ. Յովսէփ եպիսկոպոսն զատ զերաբնիչ ատենանի նախագահ Քօրիզմիս եւ ընդհ. դատարանի Պօրշկեզ-Վինգ : Պօղոս փաշա Նուպար 100 անդլ. ոսկի բաշխել տուած է աղքատներու Բարեգործական ընկերութեան միջոցաւ . 35 ոսկի ալ հայ եւ օտարազգիներէ շրջապատ ծաղկեպսակներէ գոյացած է :

— Հ. Մատթիա Կարապաշեան վախճանած է Հայ-հռոմէականաց Պաշտոյ Ս. Յակոբայ հիւանդանոցին մէջ , երկար հիւանդութենէ մը յետոյ , 85 տարեկան , Մ. Կարապաշեան իր երկերով, արդէն ծանօթ է բոլոր հայ երիտասարդութեան եւ հասակաւորներու , որոնք առհասարակ իրենց գրական կարողութեան մէկ կարեւոր մասը կը պարտին անոր , որուն մահը կորուստ մըն է հայ գրութեան մասնաւոր գրարարի ճիւղին համար : Այս ճիւղին մեծ վարպետն էր նա . որ կէս դարէ առաջ անընդհատ զբաղեցաւ Հայ գրութեան ոսկեդարը վերադարձութեան շնորհիւ . աշխարհաբարեաններու գէտ մշտած պայքարին գրաբարեան մեծ ախոյեան էր ինք :

— Վախճանեցաւ նաեւ Միւթարեան միաբաններէն ու մեր գրական մշակներէն Հ. Մանուէլ Վ. Քաջունի ,

— Լօնտօնի մէջ Սագունին եւ ուրիշ երկու Հին Հնչակ . պատգամաւորներ սպաննողը՝ սր. Երրկի Եանքի՝ ըստած էր ըստ իւր կեղծ անցադրին , ոստիկանութեան քննութեամբ հաստատուել է թէ ողբացեալ Ձիթեանի մէկ հայրենակիցն է , Տիգրան թերխանեան անունով : Դրօշակեան թերթերու ըրածին նայելով թերխանեան Խարբերոցի ըլլալէ զատ Վերակ . Հնչակեան մասնաճիւղի մը անդամ է եղեր :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Էրմենի Ձեռնիկ

ԴՐՈՇԱԿ կազմած հէյէթի-Թահրիրիյէսինին Դավրէժէն աթիսէթի թէյէկըաֆը գաղաւիթի միջոցով ՌՐՕ ԱՐՄԵՆԻԱ եաղըյօր :

«Երեւէ եաղըն Ֆէտաիլէրտէն միւթէյէթի պեր չէթէ՝ Էրմենի Դաշնացականար պեր գաշ ֆըրդալա Թաղսիմ օլընարագ հոկտ. 1 տէ Բուս թիւրք սինօրընտան կէշիլ տիւր : Էրթէսի կիւնիւ 8 10 միլ սինօրտան իշէրտէ չէթէ . քիւրտ չօպանլարտան կէօրիւլըր վէ տէր հալ աքէրտէն , թիւրք էհալիտէն վէ քիւրտ աշի էթիւ . տէն իհալթէ օլընը :

«Տէհէթիլ պեր գաղաւ պաշար վէ իւշ կիւն տէվամ իտէր : Էրդըրտէն ծալեպապտան վէ Կարաքիլիսէտէն աքէր կէթիլիլըր : Տիւլման թարաֆընտան երեղէրէն էօլիւ տիւշէր . էօլէնիլտէն պեր միւրալայ , 3 գապիթ , 5 քիւրտ իշիլիլըր , քէզա նամ տար Բէշիւտ բաշանըն օղլու տաիլ տիւլէր : Պու դալի միւսալի գաղաւա աշիթէնի տաիլ պէօյիլըր թէյէթիլթըր օլմուշ տըր : Ֆէտաիլէրտէն պեր գըսմը թէքըար սինօրը կէշիլէ մուվաֆագ օլտուլար »

Պուլկարիտան թիւրքիւ իւքէլէլէրիլն նաղլ օլընտան մալլէր իւշիւն Մաքէթնիս իսթիլալալթը սէպէպի իլէ վէրիլմէքտէ օլան միւշքիւլալթըն թաթիլ օլընաճաղը թիւրք հիւքիւլթի թարաֆընտան Պուլկար աճէնթիւնէ պիտիլիլտի :

— Քէզա Անատոլուտա սիւրկիւն պուլընտան Պուլկարլարա գուլմ ա սըրընթը վէրիլմէքտի իշիւն մահալլի հիւքիւլթիլէրէ էմիլլէր կէօնտէրիլթիլ Պուլկար աճէնթիլն իսպար օլընմըլ տըր :

— Բամաղան միւնսիպէթի իլէ իւրդաի չէրիթի բուս իթմէք իշիւն Սուլթանը գաղաւթ Սթան պօլ ճիհէթիլն կէշիլ տէօնմիւշ տիւր :

— Սերպիտա Պուլկար-Սըրպ գօթիլթէսինին հարէթէթի Եըլմըլ տա րահալթըլըր հարլ իտէյօր : Իշիւն գօթիլթէ իլք պահար իշիւն ըսեան հաղըրըլընտա պուլընըր ըմըլ :

Պու խոստուտա լաղըմ կէլէն միւրաճալթը իթմէք իշիւն Պէլ կրաւ օսմանը էլիսինէ թալիւմաթ վէրիլթիլ Սթանպօլտան պիտիլիլթիլ :

Պուլկար Մաքէթնիս գօթիլթէթի իշիլթէթիլն ժէնէրալ Յօնչէլին թէպտիլի գըլաթիլթէ Պէլկարաւ կիլթիլ օլմաւըր ըէվալթ օլընըյօր :

— Պուլկար բօլիթիգա միւթթէհիլթիլ իշիւն վաւ օլընմըլ օլան աֆիլը ումուլիլին պաղը

սէպէպէրտէն տօլալը թէէիլթի օլընտըլը վէ ֆաղաթ եաղընտա իլան օլընաճաղը թիւրք մէնպալարտան իշիլթիլթիլ :

ՏԱԽԻԼԻԷ

Պուլկարիտան մէլլի պանգաւր պուստան իքի ալ մուգատտէմ պիլ պէօյիլըր բուս պանգաւրտա 30 միլիտն ֆրանկըլը պանգաւթ սըրարիլ վէրիլ իտի . իշիւն եէնի պանգաւթլալ թ 10 20 50 վէ 100 ֆրանկըլը ալթուն կիւլիւշ գալմէլէր օլաճագ տըր :

Պուլկար մէլլի պանգաւր պուսըրարիլ վէրալ զիւրա շիւտի թէտալիլթէ պուլընտան պանգաւթլալըն էքէրիսի սալիլթէ զանն օլընմաղտա տըր վէ իքիւնէ պուլընտան կիւլիւշ եալիւտալթուն օլմալարըր ընկիլթիլն տէն ֆարգ օլընմալար :

Ենի պանգաւթլալ ֆարգըլը ընկիլթիլ պաղըլմըլ օլմալթէ , պիլ նաղաւտա գըլմէթիլթի վէ ճընալարը անլալըլաճագ , վէ շու գեկտեմբեր ալըն իլք կիւնլէրիլտէն էթիլթէքէթիլ տիւր : Պուլկարըն թաղիլթիլն եալմաղըլէր միւշքիւլ օլաճագ տըր :

Ենիլթիլ էթիլթիլթիլթիլ սօնըրա՝ էլվէլթիլ պանգաւթլալըր քէզա 30 միլիտն մըլտարընտա օլմալթէ Պանգա թարաֆընտան թօլալըլաճագ տըրլար :

— Ճուլա էրթէսի կիւնիլ թէքըար Ռիլ մանալթըրընտա վէրգէլէ վուգու պուլմըլ տըր :

Բիլնիսէս Քէլմանթիլին միւրաճալթընա ճէվալթէն , իթալիա գըլալ Սօֆիաւալթի գօնսօլտըր վաւթալթը իլէ Մաքէթնիսալը մուհաճիլթէրէ իանէթէն 10000 ֆր. վէրմիլ տիւր :

— «Իսթօղ» «Լօռիան» իսթիլն տէն էնի պիլ կաղէթա Սօֆիաւա իշիլ օլընմալա պաշլալմըլ տըր : Իշիւն կաղէթա թիւրք վէ Ֆրանսըլ լիսանլարը իլէ թապ օլընուպ , Սէրպիլ թիւրք կաղէթաւթնտան տահա զիլաթէ թիւրք ըէրվէր օլմալթէ՝ մէսարիֆալթը օսմանը գօմիլթիլ թարաֆընտան թէէթիլ օլընմաղտա ըմըլ :

— Թ. Բաղարճըլ գաղաւթնտա Տէպըլաշտիցա նալ քէօյիլն գըլմէթի Բանօ Խըիսթըլըն իքի մալտուլալըր հէր նէ սէպէպէն իսէ բէտէրլէրիլ գաթիլ իթմէքտէն մաւտա անըն նաշէսինի 80-100 եհրտէն տէլէրլէր :

Կօշիւլարտան իքի քիլի պէտալիտ ըէտէրի գաթիլ էվալտալըն էլիլնտէն գուրթալթընտա քէնտիլթի տաիլ եարէլէնուպ վէֆաթ իտէրլէր : Կաթիլ իքի պիւրաթէրլէրտէն պէօյիլի հիւքիւլթէ թէսիլ Բօլալը , տիլթիլ տաղա գաշար :

Ի Ր Ա Ս Ի Ա

Կովկասիա հիւքիւլթի Մշակ էրմէնիլթէ վէ տիլթէն պիլ բաւաճա կաղէթալարը իքի ալ իշիւն թաթիլ իթտիլտի :

— Բուս վէ Ճարօն տէվլէթիլթի պէյնիտէ կէրկիլթիլ արթըլ տըր : Պիլ բէվալթէ կէօրէ , աթիւլ Սիլքսիլթէլ մալթիլթիլ պաշլալմալ իսթէր իմիլ . ֆաղաթ խարիթիլ վէ հարպիլ նաղըրլարը պու էֆաւարա գաղըլ ըմըլար :

— Ինկիլթիլ տէվլէթիլթի թիլթիլթէն աքէր կէօնտէրմէսի Բուսալարըն բա . հաթընը պօղըյօր : Թիլթիլ Ձին իսթէրթօլըլըն պիլ գըսմըլ աւտ օլընտըլընտան Ձինլէր էնէպիլթիլ գաղըլ կէնիլթէն հիտաթիլթիլ տէյուպ , Բուսալար Ինկիլթիլթիլ հարէթիլթիլ միւնսիպէթիլ կէօրիլթիլթիլ ֆաղաթ քէնտիլթիլ Մանչուրիտան չըգմալթէ Ձինլէրտէն մաւտա Ճարօն էհալթիլթիլ տաիլ իլիւր գաղէպ օլմալարըն սիւշիւնթիլթիլ :

Ֆ Ի Ա Ն Ս Ա

Ճուլալթիլթիլ չէյիսի Մ. Լուպէ իթալիա գըլալթա իտալիլ թիլթիլթիլ մէք իւղթ տալիլթէ Բամալա կիլթէք տէյուլար :

— Տըլթիլթիլ տալալը թէքըար իտալիլ մուհալթէլ օլաճագ տըր : Նա . սիլթիլթիլ (միլլի) ֆըրգալը պիլ մա . նիլթիլթիլ նէլթիլ իլէ պու մուհալթէլթիլ գաղըլ չէտիլթէն բրօթիլթիլ իթմէքտէ տիւր : վէ տալմանըն չանլարնա սալիլթէ էվալթ գաղըլալթըլ վէ եալմալթիլ չանիլթիլ թուլթիլթիլ օլմալթ թէհալթիլ իլէ հիւքիւլթիլ իթիլթիլ իտէյուլար :

— Պանիլթիլ նաղըլընտա մէհիլթիլ մէպուսանտա պէյանը իւղթ , Ֆրանսըլ տօնանմալը իլիւն էնիլ թահալթիլ պան (ընդօղլիլ) հարպ վաղըլարը եաղըլմալթա տըրլար :

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ Տիլիլն Եօրտանքա Քալթըրմօլա Սեմքօլա , ընթացաւարտ Քիլթիլ Կալսեալտիլ համալարտանի , հիւանդներ կընդունիլ ամէն օր իր բնակարանին մէջ , Տրոկօման փողոց , թիւ 12, Բողըրալիտալ ժողովարանի մօտը Գիւնթիլ Ձիթիլթիլ ԵՆ

ՍՐԱՆ «ՍԱԷՏԻՆԵՆԻԷ»

Վաղը երկիլ «ԱՏԷԹՏԱ» Հայ գէրա . խալթը Պ. Պապտանի առաջնորդութեամբ պիլ ներկայացնէ իւր վիլլիլն ներկայացուլ , առաջին անգամ ըլլալով ԿՈՅ ՄԷ ՏԱՄՆԱՄԵՍ ԿԵՆՏՐԷ լարոյալիլ թաղիլթիլ 5 ալար ԵՐԳ ԵՊԱՆԿ ԵՐ . Ռէքէկալի Օլիալի Ե. ՀՏ . Յակոբի կողմանէ :

Одговорникъ: Н. Драгуевъ